ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտն համայնք, ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Արագածոտն, 2-րդ փող. 1 շենք, Հեռ. (093) 809081 , aragatsotn.aragatsotn@mta.gov.am

N 46
29 հուլիս 2019թ.

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան

Ձեզ ենք ուղարկում Արագածոտնի համայնքապետարանի ավագանու 15.07.2019 թ.-ի թիվ 25 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԵԼՍԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Կատ. Առաջատար մասնագետ հաշվապահ՝ Ծ. Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 22

« 15 » հուլիս 2019 թվական

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՍԵՐՎԻՏՈՒՏՈՎ) ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կեով, 56-րդ հոդվածի 5-րդ մասով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածով սահմանված պահանջներով, հաշվի առնելով «ԲԱՐԻ ԱՐԵՎ» ՍՊԸ տնօրեն Հարություն Հրաչյայի Սահակյանի դիմումը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 5.09449 հա (կադաստրային ծածկագիր՝ 02-017-0923-0001, գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության այլ հողատեսքեր 2.00085 հա, արոտավայրեր 3.01870 հա, վարելահողեր 0.07494 հա) և 0.65668 հա (կադաստրային ծածկագիր՝ 02-017-0128-0014, գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության այլ հողատեսքեր 0.01340 հա, 0.16189 հա, արոտավայրեր 0.15625 հա, վարելահողեր 0.32514 հա) հողամասերը 25 (քսանհինգ) տարի ժամկետով, տարեկան 80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ վճարով, տրամադրել «ԲԱՐԻ ԱՐԵՎ» ՍՊԸ-ին (գրանցման համար՝ 290.110.999009, գրանցված՝ 22.12.2017թ., ՀՎՀՀ՝ 01279594) սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտով)՝ էլեկտրահաղորդման գծի անցկացման նպատակով:

2. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «ԲԱՐԻ ԱՐԵՎ» ՍՊԸ-ի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի սահմանափակ օգտվելու իրավունքի (սերվիտուտի) պայմանագրեր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պատական գրանցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ավագանիներ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

1. Ավետիքյան Լորիս

2. Մելիքյան Զորիկ
3. Կիրակոսյան Լուսինե
4. Զարոյան Գայանե
5. Մկրտչյան Արմենուհի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՂԱԶԱՐՅԱՆ**